

ՀՅԴ Բիւրոյի յայտարարութիւնը



Կարդալ էջ 3

Կեանքէն հեռացաւ ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետուհի՝ Վանուհի Իսաջանեանը



Կարդալ էջ 6

70 Հայ Երիտասարդական կազմակերպութիւններ միացան Դիմադրութեան շարժմանը

ՀՅԴ Բիւրոյի երիտասարդական Գրասենեակը հաղորդում է, որ ստորեւյայտարարութեամբ՝ Արցախի եւ սփիւռքի աւելի քան 20 երկրներում գործող երիտասարդական, ուսանողական, մարզական, եկեղեցական, հասարակական-քաղաքական եւ մշակութային միութիւններ եւ կազմակերպութիւններ, միանում են Հայաստանի մեջ թափ առած դիմադրութեան շարժմանը:

Ստորագրահաւաքը շարունակում է, դիմադրութեան շարժման միացող կազմակերպութիւնները կարող են դիմել իրենց չլրանի ՀՅԴ երիտասարդական եւ Ուսանողական Միութիւններին:

Հաշուի առնելով, հայկական պետութեան կործանման վտանգը ու Արցախի եւ Սիւնիքի կորուստը կասեցնելու հրամայականը՝ Հայ Երիտասարդութիւնը դիմում է համագլխային դիմադրութեան, որը հետեւողական պայքարի շնորհիւ առաջացնելու է երկար սպասուած արժեհամակարգային յեղափոխութիւնը:

Նկատի ունենալով,

- թուրք-ադրբեջանական փանթուրանական քաղաքականութիւնը, որ միտում ունի մեկընդմիշտ տարածաշրջանի քարտէսից ջնջելու Արցախի ու Հայաստանի Հանրապետութիւնները,

ՀՀ ապագային, դաւադիր իշխանութիւնների ընթացքը, որն առաջնորդում է միակողմանի զիջումներով՝ կարծեցեալ խաղաղութեան հասնելու քաղաքականութեամբ,



Դիմադրութեան... Ծար. էջ 6

Գանատայի մէջ կայացած Լիբանանահայութեան Օժանդակութեան նուիրահաւաքին՝ ցարդ գոյացած է 120 հազար տոլար

Գանատայի Հայ Օգնութեան Միութիւնը, ՀՅԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտէի Լիբանանահայութեան Օժանդակութեան Յանձնախումբին ու գործակից եւ ուղեկից կազմակերպութիւններուն հետ համատեղուած ճիգերով, Նոյեմբեր 20-ին նախաձեռնեց առցանց Թելեթոն-նուիրահաւաք: Թորոնթոյի «Նոր Հայ Հորիզոն» հեռուստա-ժամի կողմէ պատրաստուած տեսերիզով սփռուեցան պատգամներ եւ գեղարուեստական դրուագներ:

Գանատահայութեան լիբանոն նուիրատուութիւններուն շնորհիւ հանգանակուած գումարը, Նոյեմբեր 24-ի դրութեամբ հասած է 120 հազար տոլարի, որ ամբողջութեամբ պիտի յատկացուի Լիբանանահայութեան անմիջական օժանդակութեան ծրագիրներուն: Նուիրահաւաքը պիտի շարունակուի մինչեւ Դեկտեմբերի աւարտ:

Հանգանակային Արշաւ Լիբանանահայութեան

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Միրելի հայրենակիցներ եւ ՀՕՄի առաքելութեան հաւատացող բարերարներ:

Հայ Օգնութեան Միութեան Գանատայի Շրջանային վարչութեան եւ համայն ընտանիքի անունով կու գանք մեր սրտագին շնորհակալութիւնները յայտնել ձեր բոլորի գորակցութեան եւ անվերապահ աջակցութեան համար, արհաւիրքի օրեր ապրող Լիբանանի մեր ժողովուրդին եւ պաթումներու հետեւանքով գոհուած հայրենակիցներու ընտանիքներուն:

Երախտագիտութեամբ կուզենք յայտնել թէ՛ Թելեթոնի յանձնախումբի ջանքերով եւ ձեր բոլորի աջակցութեամբ կրցանք մեր թիրախին մօտենալ ցարդ հանգանակելով \$120,000 Գանատական տոլար: Հանգանակութիւնները պիտի շարունակուին հասնելու առաւելագոյն չափով ընտանիքներու օգնութեան:



Արշաւ... Ծար. էջ 7



BOOK YOUR
TEST DRIVE TODAY!

TRO BACHEKJIAN
MIKE TOROSSIAN
KEVORK ASADOURIAN

HONDA
GABRIEL

HONDA

7000, boul. Henri-Bourassa Est,
Montréal-Nord, QC H1G 6C4
☎ : 514 327-7777



Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN
NOW OPEN



Մեփականատեր
Յարութ Միփան

Հնտանեկան բացառիկ գործառնություն
ուր կը գտնէք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

 **IN HOUSE**

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիքի հաց եւ իրաքեան սոմուն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



ՀՅԴ Բիւրոյի յայտարարութիւնը

Այսօր եւս մէկ անգամ Հայաստանն ու հայութիւնը ականատես եղան Ադրբեջանի արհեստածին Հանրապետութեան նկրտումներին, որին, ցաւօք, զոհ գնացին մեր ազգի արիագոյն տղաները, բռնադատուեցին պետութեան տարածքներ: Ոչ միայն աշխարհը գիտի, այլ ամէնից լաւ հէնց ինքը՝ Ադրբեջանն է գիտակցում, որ եթէ չլինէին ու չլինեն շահագրգիռ տարբեր երկրների ու ուժերի անմնացորդ հովանաւորութիւնը՝ ինքը ոչինչ է հայ զինուորի բազկի առջեւ:

Հայութիւնը՝ ի Հայաստան եւ ի Սփիւռս աշխարհի, պարտաւոր է ազգային բարձր գիտակցութեամբ համախմբուել, բռունցք դառնալ, բոլորանուէր աջակցել հայոց բանակին եւ ամէնուրէք պաշտպանել Հայաստանի եւ հայութեան շահերը՝ ընդդէմ Ադրբեջանի, Հայոց ցեղասպանութիւնն իրականացրած եւ մեր հայրենիքի մեծ մասը զաւթած Թուրքիայի եւ նրանց տարատեսակ հովանաւորների: Ազգային միասնականութեամբ պէտք է մերժել ՀՀ իշխանաւորների կողմից Հայաստանի պետութեան ազգային եւ հայութեան շահերի դէմ՝ թշնամիների հետ ստորագրուած ցանկացած նոր փաստաթուղթ:

Խոր ցաւով ենք արձանագրում կրկին, որ Հայաստանի եւ հայութեան գլխին եկած վերջին պատուհասը՝ արդիւնքն է ՀՀ իշխանութեան տհաս, անհեռատես, պարտուողական եւ մեծամիտ մտայնութեան եւ քաղաքականութեան, որը ոչ միայն անընդունելի, այլ դատապարտելի է: Պէտք է վերջ տալ ազգը պառակտելու քաղաքականութեանը, ինչպէս նաեւ՝ արտաքին դաշնակիցների ու գործընկերների հետ երկիմաստ եւ ոչ-պատշաճ ընթացակարգերով յարաբերուելու վարքագծին: Պէտք է մանաւանդ յետ կանգնել թշնամիների հետ զիջողական, հայրենավնաս քայլերից:

Կոչ ենք ուղղում բոլոր արդարամիտ ու տարածաշրջանի իսկական խաղաղութեամբ նախանձախնդիր պետութիւններին դատապարտել Ադրբեջանի յարձակումները Հայաստանի վրայ եւ քայլեր ձեռնարկել դրանց առաջն առնելու համար:

Կոչ ենք ուղղում ՄԱԿ-ին, Ընկերվար միջազգայնականին եւ միջազգային Մարդկային իրաւանց բոլոր կազմակերպութիւններին, եթէ տակաւին հաւատարիմ են իրենց արժէքներին եւ յայտարարած համոզումներին, բողոքի ձայն բարձրացնել հայութեան դէմ կատարուող անարդարութիւնների նկատմամբ:

Յանձնարարում ենք մեր Հայ Դատի բոլոր գրասենեակներին եւ յանձնախմբերին՝ պատկան երկրների ներկայացուցիչներին բացատրել իրականութիւնը, պահանջել աներկբայ դատապարտում, եւ նոր թափ հաղորդել Հայ Դատի պայքարին:

Եւ ի վերջոյ, կոչ ենք ուղղում վերջին ամսուան ընթացքին աշխարհով մէկ բողոքի ցոյցեր եւ հաւաքներ իրականացնող հայ երիտասարդութեանը՝ չհիստթափուել, զինուել յարատեւ պայքարի ոգով եւ լիճակամ ու միասնական ճիգերով պաշտպանել հայրենիքը եւ աներբ հետապնդել Հայ ազգի անժամանցելի եւ արդար իրաւունքների պաշտպանութիւնն ու ձեռքբերումը:

ՀՅԴ ԲԻՒՐՈ

16 Նոյեմբեր, 2021 թ.

Կեանքէն հեռացաւ ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան Գախկին ատենապետուհի՝ Վանուհի Իսաջանեանը

Նոյեմբեր 25-ին, յետ երկարատեւ հիւանդութեան, Մոնթրէալի մէջ իր մահկանացուն կնքեց ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետուհի՝ Վանուհի Իսաջանեանը:

Ընկերուհի Վանուհին, աւելի քան 65 տարի անձնուրաց նուիրումով ծառայած է ՀՕՄ-ին, սկսելով Հալէպէն մինչեւ Մոնթրէալ, հասնելով հայրենիք եւ մինչեւ հայրենի հեռաւոր գիւղեր ու քաղաքներ: Իբրեւ ՀՕՄ-ի ատենապետուհի, ընկհ. Իսաջանեանի աւանդը մեծ եղած է 90-ական թուականներուն ՀՕՄ-ի կողմէ Հայաստանին եւ յատկապէս Արցախեան Ազատամարտին նպաստակաւ ուղղուած օժանդակութիւններուն գծով:

Ծննդավայր Հալէպի մէջ երկրորդական ուսումը աւարտելէ ետք ան կը հաստատուի Պէյրութ, ուր Ecole Supérieure des lettres-ի մէջ կը հետեւի մանկավարժութեան դասընթացներուն: Մոնթրէալ կը հաստատուի 1968-ին եւ անմիջապէս կ'անդամակցի ՀՕՄ-ի Մոնթրէալի մասնաճիւղին: Շնորհիւ իր կազմակերպչական կարողութիւններուն, ան կը գրաւէ ուշադրութիւնը տեղւոյն պատասխանատուներուն եւ արդէն տարի մը ետք կ'ընտրուի վարչական: Երկար տարիներ, որպէս Մոնթրէալի ՀՕՄ-ի «Սօսէ» մասնաճիւղի ատենապետ, շուրջը հաւաքելով նուիրեալ ընկերուհիներ, կը տանի օգտաշատ եւ բեղուն գործունէութիւն:

1990-ին ընկերուհին կը դառնայ ՀՕՄ-ի Գանատայի նորաստեղծ Շրջանի առաջին ատենապետուհին եւ ապա 1992-ին Հայաստանի մէջ գումարած համահայկական պատգամաւորական ժողովի կ'ընտրուի կեդրոնական վարչութեան անդամ եւ ատենապետուհի: ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետի պաշտօնը կը վարէ ամբողջ 6 տարիներ:

«Հորիզոն»-ի մէջ հրապարակուած իր մէկ վկայութեան մէջ ընկհ. Վանուհի կը յիշէ ՀՕՄ-ի գործունէութեան այդ ժամանակահատուածը, նշելով. «ՀՕՄ-ի օժանդակութիւնը երկրաշարժի եւ Հայաստանի անկախութեան օրերուն, եղաւ արագ եւ արդիւնաւետ: Գործի առիւծի բաժինը ինկաւ ՀՕՄ-ի ուսերուն: Հայրենիքի ընկերային պայմանները մղեցին մեզ մշակելու ծրագիրներ՝ օգնելու հայ որբին, հայ զինուորին, հայ կնոջ, հայ աշակերտին եւ ուսուցչին: Զանազան նախարարութեանց հետ ունեցած իմ տեսակցութիւններս եւ անոնց ցուցաբերած հասկացողութիւնը եւ գործակցութիւնը մեծապէս օժանդակեցին մեր ծրագիրներուն իրագործման: Ունեցանք դժուար օրեր բայց ՀՕՄ-ը մնաց Հայաստանի մէջ միշտ պատնէշի վրայ եւ այդ օրերուն էր, որ նաեւ կը տանէինք ՀՕՄ-ի գործիչային եւ դաստիարակչական աշխատանքը երեւանի եւ մինչեւ հեռաւոր գիւղերուն մէջ»:

1974-1980 վարած է Ս. Յակոբ Ազգային վարժարանի տնօրէնութեան պաշտօնը: Անուրանալի է իր ներդրումն ու նպատակասլաց աշխատանքը Մոնթրէալի Ս. Յակոբ Ազգային վարժարանի հիմնադրման գծով: Եղած է անդամ Համազգայինի Գանատայի շրջանային վարչութեան, Հ.Յ. Դաշնակցութեան Մոնթրէալի «Միհրան Փափագեան» կոմիտէին եւ Մոնթրէալի Հայ Դատի յանձնախումբին:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի ձեռամբ պարգեւատրուած է Մեսրոպ Մաշտոցի շքանշանով, իսկ Գանատայի կառավարութիւնը Confédération Canadienne 125-ամակի առիթով պատուած է զինք բարեսիրական եւ կրթական իր տարած երկարամեայ աշխատանքին համար:

2016 թուականին, 17 Սեպտեմբեր թուակիր հրամանագրով մը, Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեան Երախտագիտութեան մետալով պարգեւատրեց Հայ Օգնութեան Միութեան Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետուհի ընկհ. Վանուհի Իսաջանեանը:

Իր պաշտած կազմակերպութեան՝ Հայ Օգնութեան Միութեան մասին ընկերուհի Վանուհիի վկայակոչումն էր. «ՀՕՄ-ին պատկանիլը մեծ հպարտութիւն մը պէտք է ըլլայ բոլոր ընկերուհիներուն համար եւ մեր աշխատանքը պէտք է ըլլայ անանձնական»:

www.horizonweekly.ca

CONNECT WITH US:

- facebook.com/pages/horizonweekly
- @horizonweekly
- horizonweekly
- YouTube – Horizon Weekly TV

CIBC Aline Shnorhokian Mortgage Advisor Tel: 1 866 231-8876 Fax: 450 688-7555 Cell: 514 797-1375 aline.shnorhokian@cibc.com	Sutton REALTORS INC. ALBERT ARKILANIAN (Courtier immobilier résidentiel) Residential Real Estate Broker aarkilanian@sutton.com Cell: 514.962.8822 Bur: 514.426.9595 Fax: 514.426.9596 *certaines conditions s'appliquent	HONDA HONDA GABRIEL 7000, boul. Henri-Bourassa Est Montréal-Nord, QC H1G 8C4 www.hondagabriel.com Tro Bachejkian Représentant des ventes Véhicules d'occasion Pre-owned Sales Consultant tbachejkian@gabriel.ca Tél.: 514 327-7777 Poste: 4139 Téléco.: 514 262-8019 CONCESSIONNAIRE DE QUALITÉ
École De Conduite AZIG Driving School Tel: 514-336-1110 Moniteur-Instructeur AUTOECOLEAZIG@HOTMAIL.COM 1400, rue Sauvé O, Montréal, QC H4N 1C5, Suite 1438 Centre Adonis II	Hôtel du Parlement/ Parliament Building 1045, rue des Parlementaires Bureau/Office 321 Québec (Québec) G1A 1A4 Tél./Phone 418 644-4050 Bureau de circonscription/ Riding Office 4599, boulevard Samson, bur. 201 Laval (Québec) H7W 2H2 Tél./Phone 450 686-0166 Téléco./Fax 450 686-7153 Guy.Ouellette.CHOM@assnat.qc.ca assnat.qc.ca	BRING YOUR OWN WINE NAZARETH CLASSIC GRILL 550 Curé Labelle, suite 17, Ste-Rose, QC H7L 4V6 Tel: 450.937.4064 Email: resto.nazareth@hotmail.com
KIA GABRIEL NORD 6464 Boul Henri-Bourassa E, Montréal-Nord, QC H1G 5W9 kiagabrielnord.com Sam Karadanaian Directeur des ventes Sales Manager T 514 323-7777 Ext. 5921 E skaradanaian@gabriel.ca F 514 395-9275	KRIKOR MAROUNIAN RLU Independent Financial Security Broker Life Insurance • Disability & Critical Illness Insurance Group Insurance • RRSP/TFSA/RESP Travel/Visitor Medical Insurance 11820 General Giraud Montreal, QC H4J 2H6 krikormar@gmail.com Res: (514) 332-7021 Fax: (514) 731-7499 Cell: (514) 927-2666	NETTOYEUR MARIE-CLAIRE CUEILLETTE ET LIVRAISON GRATUITE À DOMICILE ET AU BUREAU (MONTRÉAL ET LAVAL) 2535 de Salaberry, Montréal Tél: 514.334.7830

Մենք Արեւելումի՞ Հարց Ունինք

Քսաներորդ դարասկիզբէն սկսեալ հայ քաղաքական միտքը բազմաթիւ աշխատութիւններով քննարկման առարկայ դարձուցած է Հայաստանի արեւելումի հարցը եւ աներկբայ եկած է այն եզրակացութեան, որ Հայաստանի փրկութեան միակ բանալին հայկական արեւելումն է։ Այս եզրակացութիւնը այնքան ժողովրդականացած է, որ հայոց պատմութեան բազմաթիւ դրուագներ անվիճելի կը դարձնեն արեւելումի հարցը, սկսած Հայոց Հայրիկի Երկաթէ Շերեփի դրուագէն մինչեւ «Օտարից մեզ ֆայտա չկայ» պարզ ու յստակ երգ-բարձրաձայնումը։

Հարց կրնայ ծագել, որ այսքան յստակ եզրակացութեան մասին այսօր խօսիլը ի՞նչ շարժառիթ ունի։ Շարժառիթը հայ քաղաքական թատերաբեմին վրայ մանկունակութեան աստիճանի հասած ծիծաղելի, բայց միեւնոյն ատեն՝ մտահոգիչ քննարկումներն են, որոնք խղճուկ հիմնաւորումներով նախ կը պնդեն, որ մեր ներկայ արեւելումը ռուսական է, ապա կը պնդեն զայն ամերիկեան արեւելումով փոխարինել։ Այս հիմնաւորումի հեղինակները չեն ալ գիտակցիր, որ Խորհրդային Միութեան անկումէն ետք, պետութիւններու համար վերացած է արեւելումի խնդիրը, որ քիչ թէ շատ, որոշ գաղափարական եւ ընկերա-տնտեսական վարդապետութեան հիմնաւորում մը ունէր անցեալին, տեղը զիջելով՝ ռազմաքաղաքական հաշուարկներու եւ միջազգային դերակատար ուժերու փոխարաբերութիւններուն։

Փաստ է նաեւ այն, որ միջազգային դերակատար ուժերու հրահրումներով թերած եւ տկար երկիրներու մէջ, արուեստականօրէն կը խրախուսուի ու կը քարոզուի արեւելումի խնդիրը, գլխաւորաբար զայն շղարշելով ժողովրդավարութեան, խօսքի ազատութեան, մարդկային իրաւունքներու, միջազգային չարչրկուած օրէնքներու եւ վաղուց արդէն իմաստազրկուած այլ լողունքներով։ Միացեալ Նահանգները իրենց բոլոր միջամտութիւնները կը հիմնաւորեն ժողովրդավարութեան հաստատման եւ մարդկային իրաւունքի պաշտպանութեան լողունքներով, առանց որեւէ տեղ իսկական ժողովրդավարութեան հաստատման եւ ոտնահարելով մարդկային ամենատարրական իրաւունքները։ Ռուսաստանը իր բոլոր միջամտութիւնները կը հիմնաւորէ միջազգային օրէնքներու տրամաբանութեամբ, ոտնահարելով միջազգային օրէնքներով իսկ սահմանուած ինքնիշխանութեան տարրական սկզբունքները։

Եւ հարց կը ծագի, ի՞նչ անիմաստ ու արուեստական վէճ է այսօր հայ քաղաքական թատերաբեմին վրայ։ «Օտարից մեզ ֆայտա չկայ» համոզումը այլեւս չի դործե՞ր, թէ միջազգային դերակատար ուժերը լծակները ի դործ դրած են եւ մեր վզին փաթաթած են արեւելումի լուծը, այնպիսի կարեւորութեամբ՝ որ մեր պարտութիւնները նոյնիսկ կը բացատրենք արեւելումի ծիրին մէջ։ Նժդեհի հաստատումը միշտ այժմէկան է, երբ վայ կու տայ այն ժողովուրդին, որ իր գլխուն եկած չարիքներուն պատճառը ուրիշներուն մէջ կը փնտռէ։ Այսօր, մեր ազգին ու հայրենիքին վիճակուած պարտութիւններուն պատճառը ոմանք կը վերագրեն ռուսին, կը մեղադրեն Իրանին, մոռնալով, որ մենք ենք, մեր սեփական իշխանութեան ապիկարու-

Յարգելի Քէպէքի Համազգայինի «Մուշեղ Իշխան» գրադարանի գրասէր բարեկամներ,

Կը շնորհատրենք բոլորիդ Նոր տարին եւ Սուրբ Ծնունդը եւ կը մաղթենք ուրախ եւ առողջ տարի մը։

Այս առթիւ կ'ուզենք յատուկ շնորհակալութիւն յայտնել բոլոր անոնց, որոնք զանազան առիթներով ներդրումներ կատարած են գրատարածիս՝ անդամագրուելով, գիրքեր նուիրելով ու հարստացնելով գրատարածիս դարանները։

Կ'ուզենք տեղեկացնել թէ գրատարածը բաց է՝ Երեքշաբթի եւ Հինգշաբթի օրերը, կ.ե. ժամը 12:00-4:00, իսկ Կիրակի օրերը՝ ժամը 11:00-էն 1:00։

Ձեզ սպասարկելու միշտ պատրաստ Սիրով՝
Գրատարածի անձնակազմ

թիւնն է գլխաւոր ու միակ պատճառը մեր բոլոր ձախողութիւններուն ու կորուստներուն։ «Մեր դաշնակից ռուսը չօգնեց», «Ամերիկան աչք փակեց» եւ այլ տեսակի հիմնաւորումներ ոչ մէկ ձեւով չեն կրնար արդարացնել մեր պարտութիւնները։ Նոյնքան անիմաստ, անօգուտ ու կասկածելի են ռուսական «արեւելում»էն դուրս գալու եւ արեւմուտքի գիրկը նետուելու սին վերլուծումները, եթէ անոնք չեն բխիր Հայաստանի աշխարհաքաղաքական շահերու տրամաբանուած հիմնաւորումներէն, որոնք իրենց թելադրանքով կրնան ձեւաւորել մեր ազգային ռազմավարութիւնը, խարսխուած լոկ հայկական արեւելումին վրայ։

Այս ամբողջը չի նշանակեր, որ Հայաստան պէտք է իր աշխարհաքաղաքական միջավայրէն մեկուսացած ապրի, որովհետեւ հայկական արեւելում հասկացողութիւնը չի բացառեր միջպետական շահեր եւ յարաբերութիւններ, կամ փոխադարձ շահեր, որոնց պաշտպանութեան առաջին նախապայմանը ազգային ակունքներէն սնանող իշխանութիւնն է, որ ոչ թէ արհեստածին ու արտաքին ուժերու ցուցմունքներուն հետեւող արեւելեւումներով կ'առաջնորդուի, այլ աշխարհաքաղաքական վերլուծումներու լոյսին տակ՝ սեփական ազգային շահերու համատեղութեամբ ռազմավարական համագործակցութիւններ կը կառուցէ։ Ուստի, մեծ կասկածով պէտք է մօտենալ, բոլոր այն քաղաքական ուժերուն, որոնք մեր պարտութեան պատճառները այլոց մէջ կը փնտռեն եւ հայ քաղաքական թատերաբեմը ողողած են այս կամ այն արեւելումի կոչերով ու դրօշներով, եւ կամ մեր փրկութեան միակ բանալին կը տեսնեն այս կամ այն դաշնակիցի աջակցութեան մէջ։

Հայաստանի վերանկախացումէն ի վեր, քննարկման առարկայ եղած են ռազմաքաղաքական երկու ուղղութիւն, որոնք կը բխին Հայաստանի աշխարհաքաղաքական թելադրանքէն՝ հորիզոնական, Թուրքիա — Հայաստան — Ատրպէյճան, եւ ուղղահայեաց՝ Իրան — Հայաստան — Ռուսաստան։ Ռազմաքաղաքական այս ուղղութիւնները ունին իրենց ածանցեալները, որոնք կու գան այս երկու առանցքներուն մէջ դերակատար ուժերու կապերէն։ Յստակօրէն, ուղղահայեաց ուղղութեան առանցք հանդիսացող Ռուսաստանի ու Իրանի ածանցեալներն են Չինաստանն ու Հնդկաստանը, իսկ հորիզոնական ուղղութեան առանցք հանդիսացող Թուրքիոյ եւ Ատրպէյճանի ածանցեալներն են Միացեալ Նահանգեր, Մեծն Բրիտանիա, Իսրայէլ եւ Փաքիստան։ Աշխարհագրականօրէն տարածաշրջանի այս խաչմերուկը ոմանց կարծիքով Հայաստանի համար մեծ պատուհաս է, մոռնալով սակայն՝ որ ազգային խոհեմ քաղաքականութեան մը շնորհիւ կրնայ վերածուիլ ռազմաքաղաքական մեծ լծակի։ Պատմութիւնը ապացուցած է, որ հորիզոնական ուղղութիւնը հայութեան միայն աղէտ, Զարդ ու թշնամութիւն բերած է։ Իսկ, ուղղահայեաց ուղղութիւնը՝ հայութեան շահերու հաշուոյն իր սեփական շահը առաջ քաշելու հարուստ անցեալ ունի։ Բայց պատմութեան ուսուցանող դասը այն է, որ բնական է իւրաքանչիւր պետութիւն իր շահերը պիտի հետապնդէ, իսկ մեր ազգին ու հայրենիքին գլխուն եկած չարիքներուն պատճառը եղած է ներքին դաւաճանը, այլոց շահերուն լծուած այս կամ այն արեւելումի ջատագովը, քաղքենի ու ապազգային նիւթապաշտ տարրը եւ հոգիով ստրուկը։ Այս հաստատումը աւելի վտանգաւոր կը դառնայ, երբ դաւաճանը, արեւելումի ջատագովը, ապազգայինն ու նիւթապաշտ ստրուկը դեկավար դիրք ու որոշում կայացնողի կարգավիճակ ունին։

Այս վնասակար տարրերուն հարազատ բնութագրումը տալու համար կրկին դիմենք Գարեգին Նժդեհին. «Բայց կան, դեռ կան որոշ տարրեր մեզանում, միամիտ, «յիմա՛ր սրբութեան աստիճան», որ կարծում են, թէ կարելի է եւ՝ ազգ կոչուել, եւ՝ քաղաքական մուրացիկ մնալ, թէ կարելի է մուրալ անգամ պետականօրէն անկախ ապրելու իրաւունքը։ Սրանք կ'ուզէին, որ աշխարհի ուժեղները եւ՝ շնորհ անէին իրենց, եւ՝ պաշտպանէին այդ շնորհը արտաքին վտանգից»։ «Ազգերն ամէնից շատ տառապել են եւ կը տառապեն իրենց տականքների երեսից»։

Ուստի, մենք ոչ թէ արեւելումի հարց ունինք, այլ մեր ներքին տականքը վերացնելու խնդիր։


ԽԱԺԱԿ ՄԿՐՏԻԶԵԱՆ



Թորոնթոյի «ՆՈՐ ՀԱՅ ՀՈՐԻԶՈՆ»
յատագիրը կարելի է դիտել -

Շաբաթ առաւօտեան ժամը 9:00-10:00
Կիրակի առաւօտեան ժամը 6:00-7:00
Երեքշաբթի կէսօրոայ ժամը 12:00-1:00
Հինգշաբթի երեկոյեան ժամը 10:00-11:00

OMNI 1 կայանէն:



Ձեր բոլոր ճամբորդական
Կարիքներուն համար հեռաձայնել՝
(514) 284-7676

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...
ԼԱԻՄԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ
ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ

***Նոր Հասցէ՝** **PERMIS DE QUÉBEC**
Voyages Haig Travel
4150 Rue Sherbrooke Ouest suite 404A, Westmount, QC H3Z 1C2

Tel: + 1 514-284-7676
Email info@haigtravel.ca

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ

Զինուորեալը՝ միշտ զինուոր

Նուէր՝ պատմէշի վրայ մնացողներուն

Այս գրոյցը կուսակցական ըլլալուն մասին չէ, կուսակցականներուն ալ մասին չէ՛, թէեւ ինչպէս ուրիշներու, անոնց ալ կրնայ առնչուիլ:

Այս գրոյցը ծառայութեան՝ մասին է, ծառայութեան՝ ի՛նչ ճամբով ալ ըլլայ ան: Անշուշտ խօսքը կը վերաբերի հասարակական ոլորտին, կը վերաբերի կամաւո՛ր ծառայութեան:

Երբ կ'անդամակցինք որեւէ հանրօգուտ անշահաբեր կազմակերպութեան, կ'անդամակցինք քանի մը պատճառներով, առաջին հերթին՝ մեր մասնակցութիւնը բերելու անոր գործունէութեան՝ այդ ձեւով ալ մեր բաժինը ընծայելու հաւաքականութեան օգտակար ըլլալու աշխատանքին: Այս պատրաստակամութենէն անդին, կամ նոյնխկ անոր ետեւ, կա՛յ, անշուշտ, այն հետաքրքրութիւնը, այն սէրն ու խանդը, որ ունինք այն ոլորտին հանդէպ, որուն ծառայութեան է նուիրուած տունալ կազմակերպութիւնը: Վերջապէս կայ նաեւ յանձնառութեան հարցը, որ պատասխանատուութեան զգացումի մը առկայութիւնն է, գիտակցութեան մը վկայութիւնը:

Մեզմէ անոնք, որ հետաքրքրուած են մշակոյթի զարգացմամբ, կրթութեան յառաջացմամբ, կ'անդամակցին մշակութային-կրթական միութիւններու, կը մասնակցին խումբերու, որոնք ինքազարգացմամբ կը պարապին, այլեւ, ինչու ոչ, նաեւ կը պարեն, կ'երգեն, բեմ կ'ելլեն, կը գրեն կամ կ'օգնեն հաստատութիւններու կազմակերպական աշխատանքներուն եւ այլն:

Ուրիշներ, որոնք կապ մը կը զգան մարզական, երիտասարդական ոլորտին հետ, նոյնպէս կ'անդամակցին համապատասխան միութիւններու, կը նպաստեն այդ ոլորտի զարգացման:

Տակաւին անոնք, որ հետաքրքրուած են ընկերային-բարեսիրական աշխատանքներով, կը գտնեն զիրենք հրապուրող կազմակերպութիւնները կամ հաստատութիւնները, ժամանակ կը տրամադրեն այդ մարզին մէջ իրենց օգտակարութիւնը բերելու:

Վերջապէս ուրիշներ ալ հետաքրքրուած կ'ըլլան քաղաքական գործունէութեամբ, մաս կը կազմեն կուսակցութիւններու՝ երկրի մը կառավարման տարբեր մակարդակներուն վրայ, թեկնածու կը դառնան, կ'ընտր-

ուին, կը գործեն ազգային ժողովներու, խորհրդարաններու կամ նման կառոյցներու մէջ կամ կողքին ու կը բերեն իրենց օժանդակութիւնը:

Սա ընդհանրական երեւոյթ է, ոչ միայն հայկական:

Այս բոլորը գիտցուած, գիտակցուած իրողութիւններ են, կրկնելու անհրաժեշտութիւնը կրնայ չըլլալ, բայց եւ այնպէս յիշեցնելը կրնայ օգտակար ըլլալ: Բայց այդ յիշեցումն ալ չէ յօդուածիս նպատակը:

Բոլոր պարագաներուն, ըստ կարողութեան ու հնարաւորութեան, այդ կազմակերպութիւններու որոշ անդամներ կը հասնին ղեկավար դիրքերու, կը վերցնեն պատասխանատու պաշտօններ՝ յանձնախումբներու ատենապետութեանէն մինչեւ երկրի մը վարչապետի կամ նախագահի բարձրագոյն աստիճանները: Անոնք այդ պաշտօնները կը վարեն առեւել կամ նուազ տեւողութեամբ, ըստ սահմանուած օրէնքներու կամ աւանդութեան, ապա իրենց տեղը կը զիջին իրենց յաջորդներուն:

Միշտ չէ, սակայն, որ այդ գիջումը հեզասահ կ'ըլլայ:

Որքան ալ, որ իմաստութիւնը այդ պահանջէ, որքան ալ որ տունալ կազմակերպութեան մը շահն ալ այդ պահանջէ այն առումով, որ միշտ նոր ուժեր հասնին ղեկավար դիրքերու, փոխարինեն երկարատեւ, գուցէ արդէն յոգնած գործողները, նոր շունչ բերեն ղեկավարման մէջ, բարձր պաշտօններու հասնողներ կա՛մ չեն կրնար ինքզինք երեւակայել այդ պաշտօններէն զուրկ, կա՛մ ինքզինք կը նկատեն անփոխարինելի եւ կ'ընդդիմանան, կը դիմեն ամեն տեսակի ապօրինի միջոցներու, կը մերժեն զիջիլ, կը մերժեն դրօշաըջաւի դրօշը փոխանցել իրենց ետեւէն վազող-հասնողին, կը մերժեն զայն պատրաստել իրենց տեղը առնելու: Այդպէս է, որ բռնակալներ կը յառաջանան, այդպէս է, որ ժողովրդական քուէներով իսկ ընտրուած պաշտօնատարներ կը վերածուին... ցկեանս իշխող թագաւորներու: Այդպէս է, նաեւ, որ զինուորական հարուածներով, ահաբեկչութեամբ կամ յեղափոխութեամբ վար կ'առնուին անոնք:

Այս տխուր երեւոյթները, նուազ տարողութեամբ,

տեսած ենք ու կը տեսնենք նաեւ մե՛ր հաւաքական կեանքին մէջ, մեր ազգային-կազմակերպական կեանքին մէջ: Եւ եթէ մեր պարագային իշխաններ ու թագաւորներ չեն յայտնաբերուիր, միւս կողմէ ականատեսն ենք ուրիշ բացասական երեւոյթի մը, որուն վերացման համար է, որ զրի կ'առնեմ այս տողերը:

Այդ՝ մեկուսացումն է, ինքնա՛մեկուսացումը ա՛յն պատասխանատուներուն, որոնք յանկարծ ամբողջովին կը բաժնուին մեր հաւաքական կեանքէն իրենց վարած պաշտօններէն հեռանալէ ետք:

Երկա՛ր տարիներ, այնքան նուիրումով ու զոհաբերութեամբ, հետեւողականօրէն ու անսակարկ ծառայելէ ետք իրենց այնքա՛ն սիրած, փայփայած այդ միութիւններուն, հաստատութիւններուն կամ կազմակերպութիւններուն մէջ, անոնք մէկ օրէն միւսը երես կը դարձնեն անոնց, կը բացակային անոնց անդամական ժողովներէն ու հրապարակային միջոցառումներէն, կ'անհետանա՛ն հորիզոնէն: Մինչդեռ, եթէ անոնք իրապէ՛ս այդքան հաւատքով փարած էին իրենց պատկանած այդ կառոյցներուն, իրենց ղեկավար դիրքերը զիջելէ ետք անոնք կրնային շարունակել ծառայել որպէս աջակից նոր ղեկավարներուն, որպէս խորհրդական, որպէս այս կամ այն աշխատանքին մասնակից, կամ լոկ որպէս պարզ անդամ՝ իրենց փորձառութիւնն ու հմտութիւնը շնորհելու համար իրենց յաջորդներուն՝ այդ ձեւով նաեւ շարունակելով վայելել անոնց ու շրջապատին յարգանքն ու երախտագիտութիւնը:

Դաշնակցութեան շարքերը դիմող նորրոնծան կ'երդնու իր բոլոր ուժերով, իսկ եթէ հարկ ըլլայ նաեւ կեանքին գնով ծառայել... Առանց նման երդումի՝ գրեթէ նոյն յանձնառութիւնն է, որ կը վերցնենք՝ երբ կ'անդամակցինք մեր ազգային կազմակերպութիւններուն:

Որքան ալ դիրք զիջիլը դժուար ըլլայ ոմանց համար, այդ դիրքերէն դուրս եւս տեւական ծառայութեան գիտակցութիւնը ցկեանս գոհունակութիւն չէ՞ արդեօք, որ պիտի պատճառէր բոլորին. Պէ՛տք է պատճառէ:

Անգամ մը որ զինուորեալ դարձար, զինուո՛ր ես մինչեւ կեանքիդ վերջ...

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ

www.horizonweekly.ca

Chadir Meat & Restaurant T. 416-750-7404 T. 416-750-7400 1848 Lawrence Avenue E. Scarborough, ON M1R 2Y4 E-mail: info@ghadirmeatmarket.com	BAKERY AND FINE FOODS House of Taste and Quality 2094 Lawrence Ave. E. Unit # 2 Scarborough, ON. M1R 2Z6 Tel: 416.754.1888 416.441.2450	EK Hvac Over 30 years experience in custom Hvac. Install, service furnaces, air conditionings, fireplaces, boilers & hot water tanks. Rental programs available. Edmond Khachatoorian (416) 930-5371
ARZ fine foods The Essence of Mediterranean Gourmet Since 1989 Website: arzfinefoods.com Email: info@arzfinefoods.com Scarborough Location 1909 Lawrence Ave E, Scarborough, ON M1R 2Y6 (416) 755-5084 Mississauga Location 720 Bristol Rd W, Mississauga, ON L5R 4A5 (905) 502-9292	Sutton Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage 1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0 Annie Varbedian Sales Representative Direct: (416) 918-3615 Office: (416) 739-7200 Fax: (416) 739-9367 annievarbed@hotmail.com www.suttongroupadmiral.com	hearing aid source Andre Ayvazyan HIS B.A.S andre@HearingAidSource.ca 416 754 4327 (HEAR) Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9
Gary Chahinian President, Broker of Record 416-258-8892 Gabriel Chahinian Sales Representative 647-580-5818 The Diamond Realty	I.D.A. Part of the Royal family of pharmacies. Pharmacists Sarkis Balian Vartan Balian Maral Abdalian Balian Cassandra Pharmacy Inc. 2040 Victoria Park Ave. Toronto, Ontario M1R 1V2 Tel. : 416.449.2040 Fax: 416.449.2048	ANI BAKERY ԱՆԻ ՓՈԱՊԱՆ Middle Eastern Pizza Lahmajoun ARSEN DABBAGHIAN 25 Howden Road, Unit #2 Scarborough, Ontario M1R 3C8 Tel: 416.285.7164

ՀՕՄ-ի առաջնորդ ընկհ. Վանուհի Իսաջանեանի յիշատակին

Ստորեւ «Հորիզոն»ի գլխաւոր խմբագիր Վահագն Գարագաշեանի դամբա՝նական խօսքը՝ յանուհ չՅԴ «Միիրան Փափագեան» կոմիտէին, ընկհ. Վանուհի Իսաջանեանի յուղարկաւորութեան, Մոնթրէալի մէջ,29 նոյեմբեր 2021-ին։

Փարոս մըն էր՝ առաջնորդող, Կանթեղ մըն էր՝ յոյս սփռող, Ճրագ մըն էր ՝ կենսունակող, Ճաճանչ մըն էր, կեանքեր լուսաւորող...

Աստ հանգչի Դաշնակցութեան զինուորագրեալ եւ ՀՕՄի առաջամարտիկ ղեկավար՝ Վանուհի Իսաջանեանը, որուն ողջ կեանքի աղօթքն ու հաւատամքը, ռազմերզն ու գաղափարախօսութիւնը՝ եղան Հայ ազգն ու Հայաստանը։

ՀՕՄի Կեդրոնական վարչութեան ատենապետի պաշտօնը ստանձնեց մեր պատմութեան ամէնէն ճակատագրորոշ այն ժամանահատուածին՝ երբ Արցախն ու հայրենիքը կ'իռեւեփէին... Հայոց Ազատագրական պայքարի փոթորկաշունչ այդ հանգրուանին, խիզախօրէն առաջնորդեց Հայ Օգնութեան Միութեան անձնուրաց հայուհիները, որոնք միահամուռ կանգնեցան Արցախեան գոյամարտի նուիրեալ ազատամարտիկներու զօրասիւներուն կողքին։

Զխնայեց իքնզինք, անսակարկ նուիրուեցաւ Արցախին ու Հայաստանին։ ՀՕՄ–ի ուխտապահ ընկհ. Վանուհիի անձնուիրութեանց ու զոհողութեանց համագումարն ու տարողութիւնը՝ հսկայածաւալ ու վիթխարի է։ Իր պաշտելի կազմակերպութեան համար, ան հայկական բարեսիրական այդ ասպետութիւնը առաջնորդեց, որուն առաքելութեան հետեւորդ ուխտեալ բոլոր ասպետուհիներն ու խաչուհիները անխորի, արժանի են հայ ժողովուրդի երախտագիտական զգացումներուն, այն խաչուհիները, որոնք ընկհ. Վանուհիին նման այսօր կը հաւատա՛ն եւ

կը պայքարի՛ն ի խնդրի հայութեան արգար գատին։

Բանաստեղծ Մուշեղ Իշխան Հայ Օգնութեան միութեան Մասին հետեւեալ վկայութիւնը կատարած է. «Նրբ հայ կիւնը կը գինուորագրուի Խաչով, ան ոչ միայն քանկագին նպաստ մը կը քերէ Օգնութեան Միութեան այնքա՛ն կենսական նպատակներուն, այլ նաեւ հոգեպէս եւ մտայնութեամբ կը դառնայ պայխաւորդ հայ կիւն»։ Վանուհիի սպառնազինուած էր այդ խաչով եւ բարեսիրական իր գործադաշար տարածեց չորս տարբեր բեւեռներու վրայ՝ Հայաստան, Արցախ, Զաւախք եւ Սփիւռք։ Իր ծանրաբեռնուած օրակարգերով հանդերձ՝ չվարանցաւ հայութեան դիմագրաւած իրերայաջորդ մարտահրաւէրները դիմագրաւելու եւ զօրաշարժի ենթարկելով ՀՕՄ–ի շարքերը նետուեցաւ գործի դաշտ։ Բովանդակ կեանք մը ՀՕՄ–ին նուիրաբերելով հանդերձ, Գանատայի մէջ իր ներդումը ունեցաւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Համազգայինի եւ ՀՄԸՄ–ի կազմակերպական եւ միութենական աշխատանքներուն մէջ։

Հայոց Յեղասպանութեան վերապրողներու երկրորդ սերունդի ներկայացուցիչ ընկհ. Վանուհին գիտակից էր, որ տարասփիւռ հայկական գաղթօճախներուն մէջ, հայ վարժարաններուն վիճակուած էր ազգային եւ հոգեւոր արժէքնեւրով կրթել սերունդները եւ կերտել ազգային իր պատկանելիութեան գիտակից հայ երիտասարդութիւն։ Այստեղ եւս լիովին կատարեց իր առաքելութիւնը եւ դարձաւ Մոնթրէալի Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի հիմնադրման մղիչ ուժերէն մէկը, գործնապէս նաեւ վեց տարի վարելով նո՛ւ

րահաստատ վարժարանի տնօրէնի պաշտօնը։ Իբրեւ հայ մշակոյթի ջերմ պաշտպան՝ սպասարկեց նաեւ Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան, վարելով Համազգայինի Գանատայի Շրջանային վարչութեան ատենապետի պաշտօնը։

Իր դաւանագիրքերն մէջ ամբադրուած էր մեծատառ եւ յստակ մէկ հասկացութիւն՝ Նուիրում, Համապարփակ նուիրուածութեամբ Հայրենիքին, ժողովուրդին եւ Դաշնակցութեան ծառայելու գաղափաւրը։ Այդ բարոյական ընծայաբերումի բարձրակէտը հանդուսացան իր անձնագոհութիւնն ու անձնուրացութիւնը, մարդկային արժանիքներ, որոնք Վանուհիին փոխանցուած էին ՀՕՄ–ի անցեալի նուիրեալ առաջնորդներուն եւ գործիչներուն կողմէ։

Իր ողջ կեանքի ընթացքին՝ առաջնորդեց, սպասարկեց, ծառայեց։ Հայութեան ամէնէն դժուարին հանգրուաններուն առաջնագծին վրայ կանգնեցաւ անսասան, առաջնորդեց ՀՕՄ–ը մեր պատմութեան ամէնէն փոթորկայոյզ ժամանակներուն, սակայն իրեն վստահուած նաւը՝ անխորտակ հասցուց նաւամատոյց։ Իր հետեւորդներուն ներշնչեց մարդկային կամքի զօրութեան հաւատալու գաղափարով եւ իրենց մէջ խարսխեց դժուարութեանց դիմաց անեերը մնալու ու ջրնկրկելու ուժական ոգին։

Իբրեւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան անդամագրուած հայորդի՝ եղաւ աննահանջ ու անզիջող Դաշնակցականի իր սկզբունքներուն գծով եւ անկոտրում կամքով մաքառեցաւ Հայ Դատի նուիրազործման ի խնդրի։ Մոնթրէալի չՅԴ «Միհրան Փափագեան» կոմիտէի իր՝

րեւ անդամ՝ միշտ գտնուեցաւ պատնէշի վրայ եւ հաւատարմօրէն կատարեց Դաշնակցական կոմիտէի անդամի իրեն վստահուած պարտաւորութիւններն ու առաջադրանքները։

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան պատմագրութեան մէջ մեղի ծանօթ զինատար հայդուկային խումբերու պատմութիւններու հետեւողութեամբ՝ կերտեց նաեւ իր դրուագը, երբ Արցախեան ազատամարտի օրերուն, գոյամարտին ֆիւնանսաւորման գործընթացին մասնակից դառնալով, անցակէտերը հատելով, անհրաժեշտ գումարները անձնապէս հասցուց նպատակակէտին։

Դաշնակցութեան հիմնադիր Ռոստոմի իսկ բառերով՝ չկան մեծ ու պզտիկ գործեր. Ընկհ. Վանուհիին համար նոյնպէս չկային տարողութեամբ մեծ՝ կամ փոքր գործեր, կար միայն առաքելութիւն, կար Դաշնակցական հաւատաւոր գործիչի կողմէ մեր նահատակներու կիսատ գործի շարունակութիւն, մեր ժողովուրդի բովանդակ իղձերու՝ Ազատ ու բարօր, Անկախ ու հօրօ, եւ Արցախով միաւորուած, Մէկ ու Միացեա՛լ Հայաստանի եւ Մէկ ու Միասնակա՛ն Հայութեան երազի իրականացում։

Յոյսի, բարեսիրութեան, անբասիր վարքի ու անձնուիրութեան արժանիքներով աուլցուն սլացք էր Վանուհի Իսաջանեանի կեանքը։

Գերմանացի փիլիսոփայ Արթուր Շոփենաուերը հետեւեալ գեղեցիկ բնագանցական խօսքը ունի կեանքի ու մահուան մասին, ան կ'ըսէ. «Կը հաւատամ, որ երբ մահը փակէ մեր աչքերը, պիտի զարթնինք նոր լոյսի մը մէջ... այնպիսի չողացող լոյս մը, որուն ստուերը արեւին լոյսը պիտի ըլլայ»։ Այսօր Վանուհիի էութիւնն ու հոգին միաձուլուած են այդ լոյսին մէջ։ Միացած է Աօսէ Մայրիկին, Լոյա Սասունիին, խմբապետուհի Ռբալին, հոն լոյսերուն մէջ։

Յտեսութիւն ընկերուհի Վանուհի, մինչ հանդիպում անդրատեսնչ լոյսերուն մէջ։

Դիմադրութեան... Սկիզբը էջ 1

Հայաստանի Հանրապետութեան ներքաղաքական փակուղին եւ այն իրականութիւնը, որ ՀՀ Ազգային ժողովում ընդգրիմութեան ծաւալած գործուենչութեան կողքին անհրաժեշտ է դիմել բազմաճակատ պայքարի՝

Հայ երիտասարդութիւնը որոշել է չյարմարուել այս իրականութեանը, այլ՝ մեկնարկել համազգային երիտասարդական դիմադրութեան շարժում՝ պայքարի հինգ հիմնական ճակատներով՝

1. Թափ հաղորդել հակաթուրք եւ հակաադրբեջանական պայքարին,

Գերտերութիւններին հասցնել այն պատգամը, որ իրենց ծրագրերը չեն կարող իրականացնել Հայաստանի եւ հայութեան ազգային–պետական շահերի հաշուին,

3. Կտրուկ քայլերով մերժել ՀՀ իշխանութիւնների պառակտող ու պետականակործան քաղաքականութիւնը,

4. Պայքարել Արցախը հայաթափելու, այն ՀՀ–ից ու Սփիւռքից անջատելու աղբբեջանա–թուրքական փորձերի եւ Սիւնիքից արտագաղթի հոսանքի դէմ–

Միւելի՛ երիտասարդներ,

Կոչ ենք ուղղում բոլորիդ՝ միանալ այս շարժմանը այս ճակատագրական օրերին,բոլորս՝ իրաւունք չունենք մատնուելու յանցաւոր անգործութեան։ Զարթօնքի եւ ազգային անկումը վերելքի վերածելու պահը հիմա՛ է։

Յայտարարութիւնը ստորագրող կազմակերպու–

թիւններ։

«Միացեալ Հայաստան»
ԵՀԿ Արցախ

ԱԺԿ Երիտասարդական թեւ Արցախ

չՅԴ Արցախի «Արամ Մանուկեան»
ուսանողական միութեան Արցախ

չՅԴ Արցախի Երիտասարդական Միութիւն Արցախ

«Արդարութիւն»
կուսակցութեան երիտ․ Պատասխանատու Արցախ

«Ապռաժ երիտասարդական միութիւն»
ՀԿ Արցախ

Հաւասար հնարաւորութիւն ՀԿ Արցախ

«Դէպի Արարատ»
կրթական մշակութային միութեան երիտասարդական գրասենեակ Ռուսաստան Երիտասարդ քաղաքագէտների Հայկական Ասոցիացիա Ռուսաստան

ՀՄԸՄ Ռուսաստան Ռուսաստան

չՅԴ Սուրիոյ Երիտասարդական Միութիւն Սուրիա

չՅԴ Քրիստափոր Ուսանողական Միութիւն Սուրիա

Համազգայինի Սուրիոյի Շրջանային Վարչութիւն Սուրիա

ՀՄԸՄ Սուրիոյ Շրջանային Վարչութիւն Սուրիա

Հայ Երիտասարդաց Միութիւն Սուրիա

Ազգային Քարէն Եփփէ Ճեմարանի Շրջանաւարտների Միութիւն Սուրիա

Ն. Զ. Հայ Մ. Մ. «Արարատ»
միութեան Սկաուտական միաւոր (Նոր Զուգայի Հայ Մարգամշակութային «Արարատ» միութեան Սկաուտական միաւոր)
The Scout unit of «Ararat» cultural and sports Union of Nor Jugha Իրան
ՀՅԴ «Թուբէն»
Երիտ․ Միութիւն The Armenian Revolutionary Federation’s «Rouben» Youth Union Իրան
չՅԴ Ռոստոմ երիտասարդական միութիւն — Ayf Tehran Իրան

չՅԴ Յովնան Դաւթեան Ուսանողական միութիւն Իրան

չՅԴ Զաւարեան Ուսանողական Միութիւն —
Zavarian Student Association
Լիբանան

*չՅԴ Լիբանանի Երիտասարդական Միութիւն –*LEM
Լիբանան

Պէյրութի Ամերիկեան Համալսարանի Հայկական Ակումբ —
Lebanese Armenian Heritage Club
Լիբանան

Լիբանանի Ամերիկեան Համալսարանի Հայկական Ակումբ —
Պէյրութ– Armenian Club — Lebanese American University — Beirut
Լիբանան

Լիբանանի Ամերիկեան Համալսարանի Հայկական Ակումբ —
ժպէյլ– Armenian Club — Lebanese American University — Jbeil
Լիբանան

«Սեն ժողէֆ»
Համալսարանի Լիբանանահայ Ուսանողներ — Lebanese Armenian Students of Saint Joseph University
Լիբանան

Լիբանանի Միջազգային Համալսարանի Հայկական Ակումբ —
Lebanese International University
Armenian Club
Լիբանան

Լիբանանի Պետական Համալսարանի Հայկական Ակումբ —
Lebanese University
Armenian Club
Լիբանան

«Նոթը Տամ»
Համալսարանի Հայկական Ակումբ – Lebanese Armenian Club — Notre Dame University
Լիբանան

Հայկազեան Համալսարանի Լիբանանահայ Ուսանողներ —
Lebanese Armenian Students of Haigazian University
Լիբանան

Ռամկավար Ազատական Կուսակցութեան —
ԵՌԱԿ Մ. — Armenian Democratic Liberal Party Youth Union
Լիբանան

Փորթուգալեան Երիտասարդական Ուսանողական Ակումբ —
Portugalian Youth & Students’ Club
Լիբանան

ՀՄԸՄի Լիբանանի Սկաուտներ —
Scouts of Homenetmen Lebanon
Լիբանան

Հայ Եկեղեցու Համալսարանական Ուսանողների Միութիւն —
Armenian Church University Students’ Association
Լիբանան

ՀԲԸՄ– Հայ Երիտասարդաց Ընկերակցութիւն —
AGBU– Armenian Youth Association
Լիբանան

չՅԴ Քուէյթի Քրիստափոր Երիտասարդական Միութիւն

Հ.Մ.Ը.Մ.–ի Քուէյթի Մեկուսի Մասնաճիւղ Քուէյթ



ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ
ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ՊԱՏԳԱՄԸ

Ե. ՏԱՐԻ, ԹԻՒ 1, ԴԵԿՏԵՄԲԵՐ 2021



ԹՈՂ ԲԱՑՈՒԻՆ...

«Վարդապետ, ձեռքդ անոնց գլխուն վրայ դիր և իրենք պիտի լսեն և խօսին»։ Այսպիսի խնդրանքով և համոզումով ու մանաւանդ վստահութեամբ դիմեցին Յիսուս Քրիստոսի, որպէս բժշկապետ, երբ Ան Տիրոսի և Սիդոնի սահմաններէն անցնելով կու գար Գալիլիոյ ծովեզերքը։ Յիսուս տեսնելով խնդրող հարազատներուն հաւատքը, որ ինք միայն իր ձեռքը դնելով անոնց գլխուն կրնայ բժշկել, ունի զօրութիւնը հրաշք գործելու։ Եւ ինչ խորհրդաւոր է այն պատկերը, երբ Յիսուս խուլին և համրին ամբոխէն կ'առանձնացնէ և իր ձեռքերը երկինք բարձրացնելով կ'ըսէ. **«Եփիաթա, որ կը նշանակէ բացուի՛ր»** և իսկոյն խուլը կը սկսի լսել, համրին շուրթներուն կապանքները կը քակուին և կը սկսի խօսիլ։ Այս բոլորը յստակ պատախաճան էր անոնց խոնարհութեան և յարատն աղօթքին։

Հետաքրքրական է յատկապէս այն երևոյթը, թէ ինչպէս Յիսուս կը թելադրէ անոնց, որ **«մարդու մի՛ ըսէք այս եղածին մասին»**, բայց ընդհակառակը ատելի կը տարածուի և մարդիկ զարմացած իրարու կ'ըսեն, որ այս մարդը ինչ որ կը կատարէ՝ լաւը կ'ընէ։ Նոյնիսկ ծովուն

ալիքները, հովը և փոթորիկը կը լսեն ու կը հնազանդին իրեն, խուլը կը լսէ ու համրը կը սկսի խօսիլ։ Հրաշք մը, որ ատելին է, քան սովորական բժշկութիւնը։ Հրաշք մը, որ ինքնին հրաւէր մըն է հոգևոր կեանքի վերանորոգութեան, հոգևոր կեանքի արթնութեան։

Քրիստոս առաջին հերթին այս հրաշքի կատարումով ցոյց տուաւ, թէ ինքն է Աստուծոյ Որդին, որ զօրութիւնն ու իշխանութիւնը ունի այդ բոլորը կատարելու։ Որպէս բարի ու քաջ հովիւ պատրաստ է իր կեանքը ընծայաբերելու յանուն մարդկութեան, յանուն քեզի և ինծի՝ յանուն մեր մեղքերու թողութեան, սակայն անոնց համար, որոնք պատրաստ են խոստովանելու և ապաշխարելու ու իրենց կեանքը ապաշխարութեան կեանքի ընթացքի վերածելու։

Քրիստոս բժշկութիւնը կատարեց ամբոխէն հեռու, առանձնացած, մարդոց աչքերէն հեռու, առանց աղմուկի, առանց ձայնի։ Հիմնական պատգամ մը տուաւ, որ մենք ևս երբ բարիք կ'ուզենք ընել, բարեգործութիւն կ'ուզենք կատարել՝ ընենք առանց աղմուկի, առանց թմբուկի, կատարենք յանուն նպատակի, յանուն այնպիսի մարդոց, որոնք իսկապէս պէտք ունին։

Յաճախ մեղքը մեզ կը շլացնէ Աստուծոյ խօսքին դիմաց, երբեմն համր կը դարձնէ Աստուծոյ հետ անկեղծ խօսելու։ Հետևաբար, Աստուած կ'ուզէ մեզ ազատագրել այսպիսի վիճակներէ և անոր համար կ'ըսէ. **«Քաջալերուեցէ՛ք և մի վախնաք»**։

Այսօր, առաւել ևս կը տեսնենք ու ականջալոր կ'ըլլանք, որ աշխարհը ընդհանրապէս խուլ է արդարութեան դիմաց և չի լսեր ձայները անոնց, որոնք կը բացագանչեն, կը խնդրեն...։ Ժողովուրդներ կ'անտեսուին, իրենց ձայնը տեղ չի հասնիր։

Այս բոլորին դիմաց պէտք ունինք, որ Յիսուս Քրիստոս իր աջը դնէ մեր վրայ և մեր խլացած ականջները և համր լեզուները բացուին մեր նմանին, կարիքաւորին ձայնը լսելու, լուռ օժանդակելու։

Թող բացուին մեր ականջները, լսելու համար Աստուծոյ կենդանարար ձայնը, լսելու հիւանդին, կարիքաւորին և վշտացածին ձայնը։

Թող քակուին մեր շրթներուն կապանքները մեր Տիրոջ հետ յարատն խօսելու և մանաւանդ վկայելու Իր անսահման սիրոյ մասին։

ԲԱՐԳԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Ո՛վ եմ ես Աստուածաշունչի համաձայն



- Ես Աստուծոյ զաւակ եմ (Յովհաննէս 1.12)
- Ես Տիրոջ միացած եմ (Ա.Կորնթացիս 6.17)
- Ես Յիսուսի վկան եմ (Գործք Առաքելոց 1.8)
- Ես Յիսուսի բարեկամն եմ (Յովհաննէս 15.15)
- Ես փրկագինով գնուած եմ (Ա.Կորնթացիս 6.20)
- Ես Յիսուսի հետ երկինքի մէջ նստած եմ (Եփեսացիս 2.6)
- Ես Քրիստոսի մարմնին անդամն եմ (Ա.Կորնթացիս 12.27)
- Ես Յիսուսի միացած եմ. դատապարտութեան ենթակայ չեմ (Հռոմայեցիս 8.1)
- Ես երկրի աղը և աշխարհի լոյսն եմ (Մատթէոս 5.13-14)
- Ես մեղքի ու մահուան ենթակայութենէն ազատ եմ (Հռոմայեցիս 8.2)
- Ես երկինքի քաղաքացի եմ (Փիլիպպեցիս 3.20)
- Ես Քրիստոսով նոր արարած մըն եմ (Բ.Կորնթացիս 5.17)
- Ես Աստուծոյ նոր ստեղծագործութիւնն եմ (Եփեսացիս 2.10)
- Ես Հօր Աստուծոյ ներկայութեան կը կանգնիմ՝ Ս. Հոգիին միջոցաւ (Եփեսացիս 2.18)
- Ես համարձակօրէն և ամենայն վստահութեամբ կը կանգնիմ Աստուծոյ ներկայութեան (Եփեսացիս 3.12)
- Ես Յիսուսի սէրէն չեմ բաժնուիր (Հռոմայեցիս 8.35-39)
- Ես Յիսուսով կեանքի լիութիւնը գտած եմ (Կողոսացիս 2.10)
- Ես ամէն ինչ կրնամ տանիլ Քրիստոսի զօրութեամբ (Փիլիպպեցիս 4.13)
- Ես մեռած եմ աշխարհին համար և կենդանի եմ Քրիստոսի հետ (Կողոսացիս 3.3)
- Ես Յիսուս Քրիստոսի միջոցաւ հաւատքով արդարացած եմ ու հաշտուած՝ Աստուծոյ հետ (Հռոմայեցիս 5.1)
- Ես բարիին գործակից եմ (Հռոմայեցիս 8.28)
- Ես Աստուծոյ գործակից եմ (Ա.Կորնթացիս 3.9)
- Ես ընտրուած եմ պտղաբեր ըլլալու (Յովհաննէս 15.16)
- Ես օծուած ու կնքուած եմ Աստուծմով (Բ.Կորնթացիս 1.21)
- Ես Աստուծոյ Տաճարն եմ և Ս. Հոգին կը բնակի մէջս (Ա.Կորնթացիս 3.16)
- Ես Յիսուսի զոհագործական մահուամբը թողութիւն ստացած եմ (Կողոսացիս 1.14)

ԱՄԵՆԱՍՈՒՐԻ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ



Ս. ՀՈԳԻ ԱՍՏՈՒԱԾ

Սուրբ Հոգին Ամենասուրբ Երրորդության երեք Անձերէն մէկն է, համագոյ, արարչակից, հաւասարակից, համապատիւ և փառաւորակից Հօրը և Որդիին:

Աստուածաշունչին մէջ Սուրբ Հոգին ճանչցուած է նաև իբրև **Հօրը Հոգին** (Մատթէոս 10.20), **Յիսուս Քրիստոսի՝ Որդիին Հոգին** (Գաղատացիս 4.6: Փիլիպպեցիս 1.19: Ա. Պետրոսի 1.11), **Մխիթարիչ, Ճշմարտութեան Հոգի** (Յովհաննէս 14.16, 17, 26, 15.26):

Սուրբ Հոգիի անմիջական ներշնչումով ու գերբնական ներկայութեամբ է որ Ս. Գիրքերու հեղինակները շարադրած ու գրած են Աստուածաշունչը, որուն անունը՝ Աստուծոյ Շունչ կամ Հոգի, ինքնին կը մատնանշէ անոր Աստուածային Հեղինակին՝ Սուրբ Հոգիին:

Սուրբ Հոգին առանց խտրութեան կը հանգչի բոլոր անոնց վրայ՝ որոնք Աստուծոյ հանդէպ խորունկ հաւատք ու սէր ունին և կ'ապրին Աստուծոյ կամքին համաձայն: Իսկ անոնք որոնք կը հայիոյն կամ կը փորձեն խաբել Սուրբ Հոգին՝ անոնք չարաչար կը պատժուին եւ այս կեանքին, եւ յաւիտենականին մէջ (Մատթէոս 12.31-32: Մարկոս 3.28-29: Գործք 5.1-10):

Սուրբ Հոգին իբրև Մխիթարիչ դրկուած է Յիսուս Քրիստոսի կողմէ և կը վկայէ Քրիստոսի մասին (Յովհաննէս 15.26, 14.16, 26): Տիրոջ Մկրտութեան ժամանակ Սուրբ Հոգին աղանակերայ իջաւ Յիսուսի վրայ, հաստատելով Քրիստոսի Աստուածութիւնը և անոր Քահանայական, Թագաւորական ու Մարգարէական պաշտօնը:

Սուրբ Հոգիին գործունէութիւնը նոր մակարդակով ի յայտ եկաւ Հոգեգալստեան տօնին օրը, երբ կրակէ լեզուներու կերպարանքով իջաւ և հանգչեցաւ Վերնատան մէջ հաւաքուած աշակերտներուն վրայ, որոնք նոյն պահուն սկսան տարբեր լեզուներով խօսիլ (Գործք 2.3-4): Այդ օրն էր ահա, որ քրիստոնէական առաջին եկեղեցին կը հիմնուէր Սուրբ Հոգիին ներգործութեամբ:

Սուրբ Հոգին ինք է, որ զանազան շնորհքներ կը բաշխէ բոլոր մարդոց (Ա.Կորնթացիս 12.1-11): Ճիշդ է, որ Սուրբ Հոգիին պարգևած շնորհքները բազմազան ու բազմաբնոյթ են, սակայն բոլորին նպատակը մէկ է՝ մարդ անհատին փրկութիւնը:

Հայ Միջնադարեան մանրանկարչութեան մէջ Սուրբ Հոգին պատկերուած է գլխաւորաբար Մկրտութեան թեմաով՝ աղանիի կերպարանքով, ինչպէս նաև՝ Աստուծոյ օրհնող Աջի տեսքով:

Եթէ կ'ուզենք պտղալից ծառի նմանիլ և մեր շուրջը միշտ բարիք սերմանել ու սփռել, պէտք է Սուրբ Հոգիին պտուղներով զարդարենք մեր կեանքի ծառը:

Այդ պտուղներն են.-

1. Սէր
2. Ուրախութիւն
3. Խաղաղութիւն
4. Համբերատարութիւն
5. Ազնութիւն
6. Բարութիւն
7. Հաւատարմութիւն
8. Հեզութիւն
9. Ժուժկալութիւն:



ՄԱՏԹԷՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆ

ԳԼՈՒԽ 13

- Մերմնացանին առակը (Մր 13. 1-17)
- Մերմնացանի առակին մեկնությունը (Մր 13. 18-23)
- Որումին առակը (Մր 13. 24-30)
- Մանանեխի հասրիկին և թթխմորին առակը (Մր 13. 31-35)
- Որումներու առակի մեկնությունը (Մր 13. 36-43)
- Այլ առակներ (Մր 13. 44-52)
- Յիսուսի այցելությունը Նազարեթ (Մր 13. 53-58)

ՅԻՍՈՒՍԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱՐԵԻՈՐ ՄԵԹՈՏԸ

Մատթեոսի 13-րդ գլուխը շատ կարևոր աւետարանական նմուշ է:

Շրջադարձային երևոյթի կը հանդիպինք Յիսուսի առաքելութեան մէջ: Նախ, զինք կը տեսնենք սինակոկներու մէջ, երբ կ'ուսուցանէ, իսկ այժմ՝ ծովափին: Ուշագրաւ է փոփոխութիւնը. սինակոկներու դռները կամաց-կամաց կը փակուին իր առջև, հակառակ անոր, որ հասարակ ժողովուրդը կ'ողջունէ զինք, բայց միւս կողմէ կը տեսնենք հրեայ դեկավարներու ընդդիմութիւնը: Երբ սինակոկներու դռները կը փակուին, ան կ'ընտրէ բացօթեայ Տաճարը, գիւղական փողոցները, լճափը, տունները: Իսկական քարոզիչը ամէն վայր կը գտնէ իր պատգամը տալու:

Այս գլխուն մէջ մենք ականատես կը դառնանք Յիսուսի ուսուցման մեթոտին՝ առակախօսութեան, թէև ասկէ առաջ ալ Յիսուս օգտագործեց առակները՝ իր ուսուցման համար (Մտ 5.13-16, 6.26-30, 7.24-27, 9.16-17, 11.16-17). այս նշուած հատուածներուն մէջ բոլորն ալ իրական պատկերներ կը ներկայացնեն:

Առակը միշտ ալ ճշմարտութիւնը ակնյայտ կը դարձնէ: Քիչերն են, որոնք կրնան ընկալել և հասկնալ վերացական գաղափարներ: Մարդոց բան մը սորվեցնելու համար, անհրաժեշտ է սկսիլ այն բաներէն, որոնք հասկնալի են: Առակի ճանապարհով ուսուցանելու մեթոտի կարևորութիւնն այն է, որ հետաքրքրութիւն կը ստեղծէ. առակը ճշմարտութիւնը կը ներկայացնէ պատմութեան ձևով: Մարդը ինք իրեն համար ճշմարտութիւնը պիտի գտնէ պատմութեան մէջ: Պէտք է ըսել, որ առակը կը քօղարկէ ճշմարտութիւնը անոնցմէ, որոնք ծոյլ են կամ կուրացած՝ նախապաշարումներու պատճառով. առակը ճշմարտութիւնը կը բացայայտէ անոնց, որոնք կը ցանկան զայն տեսնել:

Կարևոր հանգամանք մըն ալ կայ. Յիսուսի առակները կը պատմուէին, չէին կարդացուեր. անոնց ազդեցութիւնը պէտք է անմիջական ըլլար, այնպէս ինչպէս փայլատակող լոյսը խաւարի մէջ, և ոչ թէ երկարաժամկետ ուսումնասիրութեան արդիւնք՝ մեկնութեամբ կամ բառարաններով:

Բնականաբար, երկու ճանապարհ կայ առակ մը հասկնալու՝ կամ մէկ պատգամ դուրս բերել պատմուած առակէն կամ զայն այլաբանօրէն հասկնալ, ուր ամէն մասնիկ կամ մանրամասնութիւն ունի ներքին իմաստ, որ պէտք է ընթերցուի և ուսումնասիրուի:

Մէկ բան անպայմանօրէն յիշենք. մենք մեզ դնենք այն պարզ մարդոց տեղը, որոնք մէկ անգամ կը լսէին Յիսուսի առակները:



Ազգային Առաջնորդարան
Armenian Prelacy of Canada
Prelature Armenienne du Canada



514-856-1200



prelacy@armenianprelacy.ca



www.armenianprelacy.ca



Խմբագիր՝ Քրիստափոր Միքայէլեան



3401 Olivar Asselin
Montreal, Quebec H4J 1L5

ARF Bureau statement on the latest attacks on Armenia

Today, Armenia and Armenians once again witnessed the aspirations of the artificial Republic of Azerbaijan, to which, sadly, the bravest men of our nation fell victim and the state’s territories were occupied. Not only does the world know, but Azerbaijan itself is well aware that without the full support of various countries and forces, it would be nothing in front of the arm of an Armenian soldier.

Armenians in Armenia and the Diaspora have the obligation to unite with a high national consciousness, form a fist, fully support the Armenian army, and defend the interests of Armenia and Armenians everywhere against Azerbaijan, Turkey, which committed the Armenian Genocide and occupied most of our homeland, and their various sponsors. Any new document signed by the Armenian authorities with enemies that is detrimental to the national and Armenian interests of the Armenian state must be rejected with national unity.

We restate, with deep sorrow, that the last tragedy Armenia and the Armenians faced was the result of the Armenian government’s immature, short-sighted, defeatist and arrogant mentality and policy, which is not only unacceptable, but also condemnable. A stop should be put to the policy of dividing the nation and the practice of dealing with foreign allies and partners through ambiguous and inappropriate processes. It is particularly necessary to refrain from compromising, nation-harming actions with enemies.

We call on all principled states that seek peace in the region to condemn Azerbaijan’s attacks on Armenia and take action to prevent them.

We call on the United Nations, the International Socialist Organization, and all international human rights organizations, if they are still committed to their values and stated convictions, to speak out against the injustices committed against Armenians.

We instruct all of our Armenian National Committees to explain the reality to the representatives of their respective countries, demand unequivocal condemnation, and give a new impetus to the Armenian cause struggle.

Finally, we urge the Armenian youth who have been protesting and gathering around the world over the past month not to be discouraged, to be armed with the spirit of continuous struggle, to defend the homeland with steadfast and united efforts, and to persistently pursue the protection of the Armenian nation’s absolute and just rights.

ARMENIAN REVOLUTIONARY FEDERATION BUREAU

November 16, 2021

Australian Government must recognize Armenian, Assyrian, Greek Genocides

CANBERRA—On November 29, the Federal Parliament’s House of Representatives unanimously debated in favour of a motion calling on the Australian Government to recognise the Armenian, Assyrian, and Greek Genocides, reports the Armenian National Committee of Australia (ANC-AU).

Trent Zimmerman MP introduced the motion to parliament, which also had fellow Government members John Alexander MP and Julian Leaser MP as speakers, joined by Opposition members Josh Burns MP, Steve Georganas MP and Joel Fitzgibbon MP, who seconded the motion.

“The House of Representatives has spoken. The Australian Parliament’s largest and most representative legislative chamber has unanimously called on Australia’s Government to recognise the Armenian, Assyrian and Greek Genocides,” said Executive Director of the Armenian National Committee of Australia (ANC-AU), Haig Kayserian.

“This unanimous outcome rejects Turkish interference in Australian foreign policy and calls on our country’s Prime Minister and his Government to

stand with the representatives elected by their constituents and call a genocide a genocide,” Kayserian added.

All six speakers have unanimously debated in favour of the first-ever motion to make the Australian parliamentary agenda, which outright calls on the Federal Government to recognise the Armenian, Assyrian and Greek Genocides

Therefore, the Australian Parliament’s most representative chamber has called on the Federal Government to fulfil the nation’s will and recognise the Armenian, Assyrian and Greek Genocides

